«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2016 թվականի

«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղում»** հարցը (զեկուցող՝ մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ս.Վ.Խաչիկյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում իրականացվել են ուսումնական, կրթական, գիտական, կազմակերպական, մեթոդական, կրթության որակի ապահովման, միջազգայնացման ու հանրային բնույթի աշխատանքներ, որոնք ուղղված են եղել մասնաճյուղի կանոնավոր գործունեությանը և նպաստել են ուսումնագիտական համակարգի զարգացմանը:

Ուսումնական գործընթացը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպվել է «Կառավարում» (այդ թվում՝ «Զբոսաշրջության կառավարում»), «Ֆինանսներ» և «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)», իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ «Գործարար կառավարում» և «Ֆինանսներ» մասնագիտություններով՝ ՀՊՏՀ-ում կիրառվող չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան: Բոլոր ստուգարքներն ու քննություններն առկա ուսուցման համակարգում անցկացվել են թեստային, բանավոր, գրավոր-թեստային, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ բանավոր եղանակներով: Ամփոփիչ ատեստավորումները կազմակերպվել են ինչպես մայր բուհում, այնպես էլ մասնաճյուղում. հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղն ավարտել և համապատասխան որակավորումներ են ստացել մագիստրոսի կրթական ծրագրի 26 և բակալավրի 41 շրջանավարտներ:

2015-2016 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղի գործունեության մեջ կարևոր դեր են ունեցել միջազգայնացման և հետազոտությունների ընդլայնման ուղղությամբ իրականացված աշխատանքները, որոնց շրջանակներում ստեղծվել է Տնտեսագիտական հետազոտությունների կենտրոն՝ համապատասխան տեխնիկական միջոցներով և ծրագրային փաթեթներով, հրատարակվել են հետազոտական և ուսումնամեթոդական նյութեր, վերապատրաստվել են ուսանողներ ու դասավանդողներ: Մասնաճյուղի գործունեության լուսաբանմանը և ուսանողների ակտիվացմանը նպաստել են ինչպես մայր բուհի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի, այնպես էլ ուսանողական խորհրդի հետ իրականացվող աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի կողմից հրատարակվել է «Գիտակրթական համակարգի զարգացման առաջնահերթությունները Հայաստանի Հանրապետության մարզերում» խորագրով գիտաժողովի նյութերի ժողովածուն,

«Տնտեսագիտական խնդիրների վիճակագրական վերլուծությունը SPSS փաթեթի գործադրմամբ» ուսումնամեթոդական ուղեցույցը, «Սոցիալ-տնտեսական ցուցանիշների գնահատումը Հայաստանում SPSS փաթեթի կիրառմամբ» հետազոտությունը և «Քաղաքացիական կրթության առանձնահատկությունները» ձեռնարկը:

2015-2016 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղում տրամադրվել են ուսման վարձի զեղչեր, բազմաթիվ կազմակերպություններից բարձր առաջադիմության կամ սոցիալական ապահովության հիմքերով հատկացվել են կրթաթոշակներ, ուսման վճարներ և ուսանողական նպաստներ, որոնք ընդգրկել են վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների մոտ 35 տոկոսին:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի ուսումնական, կազմակերպական, գիտական և վարչատնտեսական գործընթացներն իրականացվել են ՀՊՏՀ կրթական և ուսումնական ծրագրերին, սահմանված ընթացակարգերին ու կանոնակարգերին համապատասխան:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. **Մասնաճյուղի 2015-2016 ուսումնական տարվա ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել մասնաճյուղի տնօրենին՝**
   1) իրականացնել աշխատանքներ ՀՊՏՀ բոլոր ստորաբաժանումների հետ՝ ուսումնական, մեթոդական, կազմակերպական ու գիտական գործընթացներն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով.
   2) կատարել աշխատանքներ այլ կառույցների հետ գիտական ու կրթական ծրագրերի շրջանակում համագործակցության մակարդակը բարձրացնելու և ուսանողներին ու դասավանդողներին ընդգրկելու ուղղությամբ.
   3) ապահովել կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ ուսանողներին և դասավանդողներին քննարկումների, հետազոտությունների ու վերապատրաստումների մեջ ներառելով:

3. **Սույն որոշումը քննարկել մասնաճյուղի տնօրինության նիստում և իրականացնել միջոցառումներ նշված հանձնարարականները կենսագործելու ուղղությամբ:**

4. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

22.06.2016 թ.